ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ.

Արդեն 31-րդ տարին է, որ հայ ժողովուրդը տոնում է իր համար ամենանվիրական, ամենապանծալի Անկախության օրը: Այս օրը բոլոր ապրած և ծնվելիք սերունդների տոնն է, քանզի մեր հարատևության, մեր արարումների, մեր հզորության ու բարգավաճման ակունքն ինքը՝ անկախությունն՝ անկախ պետությունն է , որը ցավոք այսօր խորը վշտի և երկյուղի մեջ է: Սեպտեմբերի 21-ը անկախ Հայաստանի Հանրապետության վերածննդի, հայ ժողովրդի՝ հայրենի հողում, ազատ ու անկախ ապրելու, ազգային ինքնության պահպանման խորհրդանիշն է: Սա այն օրն է, որին մենք հասել ենք մի քանի սերունդների համառ պայքարի, անձնուրացության, քաջության և տոկունության շնորհիվ: Սա այն օրն է, որի համար անվարան մարտի են նետվել մեր հայրերն ու եղբայրները և հանուն որի զոհվեցին մեր հերոսները: Համոզված եմ՝ մեր պատմության էջերում Սեպտեմբերի 21-ը կմնա նաև որպես ազգային միասնականությունը խորհրդանշող գլխավոր տոներից մեկը, և որ մեր անկախ պետականությանը այլևս վտանգ չի սպառնա, չենք ունենա սևազգեստ մայրեր, չենք ունենա մարդկային կորուստներ, այլ կապրենք խաղաղ և ապահով հայրենիքում: Խոնարհվում եմ մեր բոլոր հերոսների, հերոսածին մայրերի և որդեկորույս ընտանիքների առջև: Փառք ու պատիվ հայրենիքի համար ընկածներին: Ի վերջո շնորհավորում եմ մեզ՝ բոլորիս, հուսալով որ այսուհետ ուրախ և ապահով ենք նշելու Սեպտեմբերի 21-ը: Մաղթում եմ նաև բարգավաճում և ամուր հավատք մեր պետականության լուսավոր ապագայի հանդեպ:

Համբերություն և խաղաղություն բոլորին:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ